

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՍՈՒՐԵՆԻ

**ԿԱՐԻՆԸ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ XIX ԴԱՐԻ
ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր**

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մելքոնյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գևորգյան Հ.Մ.

պատմական գիտությունների թեկնածու
Նուրբեկյան Լ.Զ.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հուլիսի 14-ին,
ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՎ-ի Հայոց
պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հունիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: XIX դարի վերջին քառորդին Արևմտյան Հայաստանի տարածական մեծ ընդգրկում, տնտեսական ու մշակութային բարձր համարում ունեցող Կարինի նահանգն իր աշխարհագրական դիրքով, քաղաքական, ռազմավարական կարևորությամբ մեծ դերակատարություն ուներ: 1877-1878 թթ. պատերազմից հետո Եվրոպայից դուրս մղված օսմանյան իշխանություններն աննախադեպ խստացրին բռնաճնշումները, որոնց ի պատասխան հայությունը դուրս եկավ ազգային-ազատագրական պայքարի: Սիյուռքահայ, թույլատրելիության չափաբաժիններով նաև խորհրդահայ պատմագիտությունը երբեմն, իսկ ԽՍՀՄ-ի մայրամուտին և անկախության տարիներին՝ Ռաֆիկ Հովհաննիսյանը հաճախ է ուշադրությունը սևեռվել հիմնախնդրի վրա: Մեր օրերում, երբ պետական մակարդակով բարձրացվում են Հայոց ցեղասպանության, տարածքային, մշակութային ժառանգության, պատմական արդարության վերականգնման հարցերը, հայ ժողովրդին նետված մերօրյա մարտահրավերների, քրդական հիմնահարցի և այլ գործընթացների հետնախորքի վրա հիմնախնդրի համապարփակ ուսումնասիրությունն ունի թե՛ ճանաչողական, թե՛ գործնական նշանակություն:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Կարինահայության՝ XIX դարի վերջին քառորդի ազատագրական պայքարին անդրադարձներ եղել են, սակայն հիմնախնդրի առանձին կողմեր սպառիչ լուսաբանված չեն կամ վերագնահատման կարիք ունեն: Մեր առջև խնդիր ենք դրել արժևորել այդ ժամանակաշրջանին նվիրված ուսումնասիրությունները, շեշտադրել ոչ բավարար լուսաբանված հարցերը, ներկայացնել նշված շրջանում կարինահայության իրավազուրկ կացությունը, օսմանյան իշխանությունների հակահայ քաղաքականությունը, այդ պայքարին օժանդակելու դժվարությունները, անկողմնակալ գնահատել կարինահայության դերակատարությունը XIX դարի վերջին քառորդի հայ ազատագրական պայքարում: Ատենախոսության նպատակն է.

1. Ներկայացնել այն պայմանները, որոնք նպաստեցին, որ զարթոնք ապրող, հարստահարված ու կեղեքված արևմտահայությունը, այդ թվում Կարինի նահանգի հայերը, այլևս չհանդուրժելով իշխանությունների ապօրինություններն ու քուրդ հրոսակների հարստահարությունները դուրս եկան իրենց իրավունքների համար պայքարի: Ընդգծել, որ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին զուգընթաց պայքարին նպաստեցին այնպիսի նախադրյալներ, ինչպիսիք էին. ա) Սահմանադրական շարժումը, որի ծավալմանը Կարինում նպաստեցին 1872թ. «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և «Կարինի բարենորոգումների ծրագիրը» փաստաթղթերը, բ) Ջեյթունի 1862 թ. ապստամբությունը, գ) Հայկական հարցի միջազգայնացումը, դ) 1890 թ. հունիսյան դեպքերը, ե) ազատագրական

խմբակների հիմնումը, գ) ազգային կուսակցությունների տեղական մարմինների ստեղծումը, է) ֆիդայական պայքարի նախաքայլերը և այլ գործոններ:

2. Ներկայացնելով Կարինում հայկական կուսակցությունների տեղական մարմինների ստեղծման և վաղ շրջանի գործունեության մանրամասները՝ նշել նրանց թույլ տված սխալները, թերացումներն ու ձախողման պատճառները:

3. Լուսաբանել հայությանը 1895 թ. պատուհասած ողբերգության խորքային պատճառները, կորուստների չափը և կարինահայության փորձերը դրանց դիմագրավելու ուղղությամբ: Ընդգծել, որ դրանք օսմանյան տիրապետության բոլոր ժամանակներում կարինահայությանը հասցված ամենամեծ հարվածներն էին Մեծ եղեռնից առաջ:

4. Ցույց տալ, որ ֆիդայական պայքարի նախաքայլեր եղել են նաև Կարինի նահանգում, իսկ այնուհետև տարածվել ամբողջ Արևմտյան Հայաստանում: Հստակեցնել Կարնո աշխարհի ֆիդայական խմբերի ունեցած ներդրումը, ներկայացնել կարևոր դերակատարություն ունեցած ֆիդայիներին, նահանգի տարածքով դեպի Երկիր զինամթերք փոխադրելու ուղիները, ցույց տալ այդ պայքարի խոցելի կողմերն ու պատճառները:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները:

Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է XIX դարի վերջին քառորդը: Սակայն առանձին դեպքերում որևէ հարց ավելի խորքային և պատճառաբանված ներկայացնելու նկատառումով տրվել է նախորդ ժամանակաշրջանի պատկերը:

Հերազդություն մեթոդաբանությունը: Ատենախոսությունը գրվել է պատմահամեմատական, գիտական անաչառության և վերլուծության մեթոդաբանությամբ: Սկզբնաղբյուրների, հուշագրությունների, մամուլի նյութերի և ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել և վերլուծության են ենթարկվել բազմաթիվ, երբեմն իրարամերժ փաստեր և տեսակետներ:

Արենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է ներկայացրել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժինը: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած հինգ հոդվածներում:

Աշխատանքի գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթն ամենից առաջ այն է, որ հայ պատմագիտության մեջ համակողմանիորեն ներկայացված է XIX դարի վերջին քառորդի ազգային-ազատագրական պայքարում կարինահայության դերակատարության ամփոփ պատմությունը: Հայոց վերագարթոնքն ու Սահմանադրական շարժման դրսևորումը տրված է Կարինի նահանգում 1879 թ. «Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» փաստաթղթի դրույթների

լույսով: Լուսաբանված է Կարինում ստեղծված կրթամշակութային և ազատագրական խմբակների ստեղծման պատմությունը, ազգային կուսակցությունների տեղական մարմինների հիմնադրման ու գործունեության ընթացքը և դրանց հետ առնչվող մի քանի վիճահարույց հարցեր: Ներկայացված է Կարնո աշխարհում ֆիդայական պայքարի, կարնեցի ու Կարինում գործած նշանավոր ֆիդայիների գործունեությունը: Ներկայացված է 1895-1896 թթ. նահանգին պատուհասած կոտորածների ու տարածաշրջանի հայաթափման գործընթացի պատմությունը: Առաջին անգամ ներկայացվում է Համիդիե գնդերի ձևավորմանը զուգահեռ ստեղծված «խաֆիէներ»-ի խիստ վտանգավոր համակարգը, որի նպատակն էր ջլատել հայ ազգային-ազատագրական պայքարի ուժերը:

Առենախոսության մեջ առաջին անգամ օգտագործված են արխիվային նորահայտ մի շարք փաստաթղթեր, ցայսօր ուշադրության չարժանացած վավերագրեր, նամակներ, ժամանակակիցների վկայություններ և մամուլում եղած հրապարակումներ:

Առենախոսությունը կարող է օգտակար լինել նոր շրջանի, մասնավորապես հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության հարցերով հետաքրքրվողների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև բուհական ու դպրոցական դասագրքերում կամ դասավանդելու ընթացքում:

Աղբյուրագիտական հենքը: Ուսումնասիրության շրջանակներում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի անձնական ֆոնդերի վավերագրերի հավաքածուից, հայ ազատագրական շարժումներին վերաբերող փաստաթղթերից, Էջմիածնի Ս. Լուսավորչական Սինոդի, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի, արտասահմանից ստացված վավերագրական նյութերից, Արտակ Դարբինյանի, Անուշավան Տեր-Մկրտչյանի, Ապահ Պետրոսյանի, Հայկազուն Գալուստյանի, Լևոն Սարգսյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Եղիշե քահանա Գեղամյանի, Հնչակյան ու Դաշնակցություն կուսակցությունների և այլ ֆոնդերից¹:

Կարևոր փաստաթղթեր կան Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի արխիվում և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պահվող Լեոյի անձնական արխիվում:

Առենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել Մ. Ներսիսյանի², Զ. Կիրակոսյանի³, Հ. Տասնապետյանի⁴, Ե. Փամբուկյանի⁵ Ս.

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 314, ց.8, գ. 6, ց. 32, գ. 8, ֆ. 56, գ. 68, 70, ֆ. 57, գ. 5, գ. 3, ց. 17, ֆ. 402, գ. 1, գ. 24, 25, ֆ. 41, 56, 114, ֆ. 420, գ. 16, գ. 8, 9, 12, ց. 81, գ. 214: ֆ. 424, գ. 2, գ. 116, ֆ. 1396, գ. 1, գ. 1, 8, 15, 46, 66, տարբեր թերթեր, ֆ. 453, գ. 1, գ. 59, 72: ֆ. 476, գ. 4, գ. 51:

² Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991: Հարկ ենք համարում

Վրացյանի⁶, Գ. Լազյանի, Ս. Սապահ-Գյուլյանի, Ա. Կիտուրի⁷ կազմած վավերագրերի տպագիր ժողովածուները: Կարևոր տպագիր սկզբնաղբյուրներ են թուրքական վավերագրերը⁸, օտարալեզու հրապարակումները⁹ և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրված որոշ նյութեր¹⁰:

Վավերագրերի բացակայության դեպքերում սկզբնաղբյուրի արժեք են ձեռք բերում ժամանակակիցների հուշագրությունները, որոնք, կարևոր լինելով հանդերձ, աչքի են ընկնում կուսակցական կողմնակալությամբ, հաճախ նաև՝ ժամանակագրական անճշտություններով: Արժեքավոր վկայություններ են

արձանագրել, որ Մ. Ներսիսյանի անձնական արխիվում հայտնաբերել ենք ատենախոսության թեմային առնչվող վավերագրեր, որոնք չեն ներառվել նրա կողմից հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

³ Տե՛ս Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972:

⁴ Տե՛ս Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ.՝ Հր. Տասնապետեանի, Պէրոյթ, Ա., հատ., ք. Տպագր., 1984, Բ. հատ., ք. Տպագր., 1985, Գ. հատ., 1976, Դ. հատ., 1982:

⁵ Տե՛ս Նիւթեր..., խմբ.՝ Եր. Փամպուքեանի, Պէրոյթ, Ե., 2007, Զ. հատ., 2010, Է. հատ., 2010, Ը. հատ., 2011, Թ. հատ., 2012:

⁶ Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան (այսուհետև՝ Դիւան...), Պոսթըն, 1934, 395 էջ, Բ. հատ., 1938:

⁷ Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957, տե՛ս նաև Յիսնամեակ Սօց. Դէմոկրատ Հնչակեան (1887-1937), խմբ.՝ Ստ. Սապահ-Գիլեանի, Փրովիտէս, 1938, տե՛ս նաև Պատմութիւն Ա.Դ.Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատ., խմբ.՝ Ա. Կիտուր, Պէրոյթ, 1962, տե՛ս նաև Ռամկավար ազատական կուսակցութիւն, հիմնական ծրագրեր:

⁸ Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թվականներ), Ե., 2002:

⁹ Տե՛ս Сборник договоров России с другими государствами, 1856-1917, М., 1952, տե՛ս նաև Современное состояние Османской империи, составил М. А. Убичини и П. де Куртейль, Санкт-Петербург, 1877, տե՛ս նաև Амфитеатров А., Армянский вопрос, С.-Петербург, 1906. տե՛ս նաև Коллюбакин А. Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края. Тифлис, 1888, տե՛ս նաև М. Макколь. Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 131-211. տե՛ս նաև Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и турки. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, տե՛ս նաև Гасымлы М., Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. в поисках исторической истины, М., «2014, տե՛ս նաև Karal E., Armenian questions (1878-1923), Ankara, 1975, տե՛ս նաև Hakobian A., Armenia and the war, London, 1917, տե՛ս նաև Wittin Alma, Abdul Hamid, The Shadow of God, London, 1940 և այլն:

¹⁰ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1991, թիվ 3:

պարունակում Ռ. Տեր-Մինասյանի¹¹, Ռ. Խանազատի¹², Սեպուհի¹³, Ա. Ազնավուրյանի¹⁴, Ա. Տեր-Դանիելյանի¹⁵, Մ. Տամատյանի¹⁶, Ա. Եկարյանի¹⁷ հուշերը:

Աղբյուրների մյուս խումբը մամուլում հրատարակված նյութերն են: Տարբեր հարցեր լուսաբանելիս օգտագործել ենք «Արարատ», «Արմենիա», «Արես», «Արևմուտք», «Արծուի Վասպուրականի», «Դրօշակ», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Ծաղիկ», «Կոունկ հայոց աշխարհին», «Հայրենիք», «Հնչակ», «Հորիզոն», «Մասիս», «Մամուլ», «Մուրճ», «Մեղու», «Մշակ», «Պատմաբանասիրական հանդես», «Վէմ», «Փարիզ», «Փորձ», «Московский телеграф» պարբերականներում լույս տեսած նյութեր:

Աղբյուրների վերջին խումբը էլեկտրոնային կայքերն են¹⁸: Դրանք երբեմն կարևոր տեղեկություններ են հաղորդում, սակայն դրանց վերաբերվել ենք խիստ վերապահությամբ:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Առենախոսության թեման ընդգրկող համապարփակ ուսումնասիրություն առ այսօր չի գրվել: Ստեղծված գրականության մեջ այս կամ այն չափով լուսաբանվել են միայն հիմնախնդրի առանձին կողմեր: Թեմայի լուսաբանմանը նպաստող ուսումնասիրություններ են Նաումանի¹⁹, Հ. Հակոբ ծ. վ. Քոսյանի²⁰, Հ. վ.

¹¹ Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե., Ա հատ., 1990, Բ հատ., 1990, Գ հատ., 1990, Դ հատ., 1991, Ե հատ., 1991, Զ հատ., 1991:

¹² Տե՛ս Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927 և 1929թթ. տարբեր թվերը, նույնի՝ Յիշողութիւններ, «Մշակ», Թիֆլիս, 13 փետրվարի, 1908, թիվ 35:

¹³ Տե՛ս Զորաւար Սեպուհի յուշերը (մանկութիւն, պատանեկութիւն, երիտասարդութիւն), Հալիպ, 1992:

¹⁴ Տե՛ս Արամայիս Ազնաուրեանի յուշերը, գրի առա՛ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, 1937 և 1938թթ. մի քանի համարներ, տե՛ս նաև Ազնաուրեան Ա., Առաջին յեղափոխական սուրհանդակները Ալաշկերտի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1968, թիւ 3, էջ 59-67:

¹⁵ Տե՛ս Արամայիս (Տեր-Դանիելյան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիան Հ.Յ.Դաշնակցութեան, խմբ.՝ Ս. Վրացեան, Բ հատ., էջ 5-25:

¹⁶ Տամատեան Մ., Իմ յուշերս, Պեյրուֆ, 1985:

¹⁷ Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրուֆ, 1985:

¹⁸ <http://www.aztagdaily.com/archives/190231,akunq.net/am/?p=2241,armeniancommunity.ge/News/954>, <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ119, <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 130, <http://www.slaq.am/arm/news/148100/>, և <http://www.genocide-museum.am>, <http://www.aztagdaily.com/archives/190231>, <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>:

¹⁹ Տե՛ս Նաուման, Էրզրում, թիֆլիս, 1896:

²⁰ Տե՛ս Քօսեան Յակօբ ծ. վ., Բարձր Հայք, հ. Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925:

Տաշյանի²¹ և այլ հեղինակների²² գործերը, որոնք ավելի շատ տեղեկատվական բնույթ ունեն: Հիմնախնդիրը լուսաբանելու առաջին փորձերը կատարել են Հ. Նշկյանը²³, Ղ. Չարըզը²⁴, Օ. Ճգնավորյանը²⁵, Տ. Կերեքցյանը²⁶, որոնք բոլորն էլ, լինելով կարնեցիներ, առաջնորդվել են հայրենակցական մղումներով, բայց կատարել են արգասաբեր աշխատանք:

Հ. Նշկյանը, խոսելով «Պաշտպան հայրենյացի» գործունեության մասին, ընդգծում է, որ մեծ ազդեցություն ունեցավ հայ ազատագրական պայքարի վրա: Իր ձեռագիր հուշերում կազմակերպության համառոտ պատմությունը և Խ. Կերեքցյանի կենսագրությունն է ներկայացնում նրա եղբայր Տ. Կերեքցյանը²⁷ կատարելով եզրակացություններ, որոնք ոչ բոլորն են քննություն բռնում:

Թիֆլիսի և Կ.Պոլսի արանքում գտնվող, «Հայաստանի կեդրոնական բարձրունքին վրայ նստած» Կարինը, ըստ Ղ. Չարըզի, բնականաբար պիտի դառնար արևմտահայ խմորումների կարևոր կենտրոններից մեկը: Ղ. Չարըզը շեշտում է, որ բոլոր խավերն էին մասնակցում պայքարին, բայց շարժիչ ուժն արհեստավորությունն էր: «Սահմանադրութեամբ արբեցած պոլսահայութեան եւ թուրք ու քուրդ իրական դժոխքի մեջտեղում» գտնվող կարինահայությունը հեղինակի դիպուկ բնորոշմամբ դարձավ հայկական «պահանջներուն կեդրոնը և զանոնք առաջնորդողը»²⁸:

Հայ քաղաքական մտքի՝ քրիստոնյա մեծ տերությունների վրա հույսը դնելուց ձերբազատվել չկարողանալը ժողովրդի դժբախտության պատճառ համարելով՝ Օ. Ճգնավորյանն էլ գտնում է, որ ազատագրական պայքարը ծավեց ինքնաբերաբար, որպես պատասխան օսմանյան դաժան բռնատիրության: Ձեռագիր անավարտ այս աշխատությունը, որում Կարինի մասին հարուստ տեղեկություններ կան, կարևոր աղբյուր է խնդրո հիմնահարցը ուսումնասիրելու համար: Չնայած որոշ կուսակցական դիրքորոշումներին՝ զինված պայքարն առաջինը շեփոթողի պատվին արժանացած կարնեցու մասին այս աշխատությունը, որը զարմանալիորեն սպրդել է ուսումնասիրողների

²¹ Տե՛ս Տաշեան վ. Հ. Յակովբոս, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմա-ազգագրական հարըանցի ակնարկ մը, Վիեննա, 1921:

²² Տե՛ս Կարնոյ յիշատակին, Վիեննա, 1869, Малама Я., Описание Эрзрумского жилайета, СПб, 1874:

²³ Տե՛ս Նշկեան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթոնքէն, Ֆրեզնօ, 1930:

²⁴ Տե՛ս Չարըզ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի: Կարինապատում, Պեյրոյթ, 1957:

²⁵ Տե՛ս Ճգնաւորեան Օ., Հայ ազատագրական ճիգերը Արեւմտեան Հայաստանի մէջ, նիւթը պատմութեան համար, տե՛ս ՀԱԱ ֆ. 420, ց. 16, գ. 8, ց. 81, գ. 214:

²⁶ Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, Կերեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրությունը, ձեռագիր:

²⁷ Տե՛ս Կերեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրութ., ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 49:

²⁸ Տե՛ս նույն տեղում:

ուչադրությունից, հիմնականում անաչառ դիրքերից է գրված և կարևոր ճանաչողական ու աղբյուրագիտական արժեք ունի:

Իր հուշերում Մ. Նշկյանը թեև հայտնում է վիճելի այն տեսակետը, թե «Կարինում 1890 թ. հունիսի 8-ի ընդհարման գաղտնի զսպանակները գտնվում էին Կովկասում»²⁹, միաժամանակ հիմնախնդրի լուսաբանման համար ընդհանուր առմամբ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում:

Հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասը գրվել են ՀՅԴ գործիչներ Ս. Վրացյանի³⁰, Մ. Վարանոյանի³¹, Գ. Գյուզայանի³², Ա. Գյուլխանդանյանի³³, Վ. Վալադյանի³⁴ և այլոց կողմից: Դրանք ավելի շատ հրապարակախոսական և կուսակցական բնույթ ունեն, որն զգալիորեն խանգարել է խնդրի անաչառ լուսաբանմանը: Դրանով հանդերձ, անժխտելի է նրանց կարևոր ներդրումը: Հիմնախնդրի առանձին հարցեր լուսաբանվել են Գ. Լազյանի³⁵, Մ. Սերոբյանի³⁶, Կ. Սասունու³⁷, Լ. Չորմիսյանի³⁸, Հ. Տասնապետյանի³⁹, Հ. Վարդիվառյանի⁴⁰, Հ. Գանգրունու⁴¹, Ս. Իզմիրյանի⁴² և այլոց աշխատություններում:

²⁹ Տե՛ս Նշկյան Մ., Ո՞վ փճացուց հայրփինը, Ֆրէզնո, 1920, էջ 14:

³⁰ Տե՛ս Վրացյան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, Գահիրէ, 1955, նույնի՝ Վրացյան Ս., Բագրատ վրդ. Թավաքայանի նամակները, «Հայրենիք», Բոստոն, 1933, հ. 12, թիվ 1, էջ 103-110, հ. 12, թիվ 2, էջ 98-112, 1934, հ. 12, թիվ 3, էջ 84-95:

³¹ Տե՛ս Վարանոյան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն (անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով հարստացած), Բ. հրատարակութիւն, Պեյրուս, 2013:

³² Տե՛ս Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ.Հ. Դաշնակցութիւնը, Փարիզ, 1927:

³³ Տե՛ս Գիլխանդանեան Ս., Ազգային շարժումների դրոպապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939:

³⁴ Տե՛ս Վալադեան Վ., Տիգրան Օրոնեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 6, 1960, նույնի՝ Վ., Քեռին, «Հայրենիք», 1959, թիվ 8, 11, 12, նույնի՝ Հրոսակապետ Յունսոն, «Հայրենիք», 1958, թիվ 5, 11 և այլն:

³⁵ Տե՛ս Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, տե՛ս նույնի՝ Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949:

³⁶ Տե՛ս Սերոբեան Մ., Մեր պայքարը ազատագրութեան ուղիով (վերլուծումներ Հայկական հարցին շուրջ), Գահիրէ, 1948:

³⁷ Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), տպարան «Ատլաս», Պեյրուս, 1964:

³⁸ Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ. հատ., 1878-1908 թթ., Պեյրուս, 1974:

³⁹ Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողովը (1890-1924 թթ.), Աթէնք, 1988, նույնի՝ Հ.Յ.Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը և այլ ուսումնասիրութիւններ, Պեյրուս, 2009:

⁴⁰ Տե՛ս Վարդիվառեան Հ., Մեծ երագի ճամբուն ուղեորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հ. Ա, Նիւ Ճըրզի, 2015 և հ. Բ, Նիւ Ճըրզի, 2016:

Խորհրդային Հայաստանում հիմնախնդրի առանձին հարցեր առաջին անգամ լուսաբանվել են Լեոյի աշխատություններում⁴³: Հետագայում ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության հարցում խորհրդահայ պատմագիտությանը բնորոշ են եղել գաղափարական կաղապարները և քաղաքական շահարկումները, որոնք խոչընդոտել են հիմնահարցի գիտական պատշաճ ուսումնասիրությանը: Իրավիճակը մասամբ մեղմվեց 1956թ. ձնհալից հետո: Գրվեցին աշխատություններ, որոնցից առանձնանում են Մ. Ներսիսյանի⁴⁴, Ռ. Հովհաննիսյանի⁴⁵, Վ. Պարսամյանի⁴⁶ և Զ. Կիրակոսյանի⁴⁷ ուսումնասիրությունները:

Ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերին նվիրված Մ. Ներսիսյանի աշխատությունը նոր խոսք էր օսմանյան տիրապետության տակ հեծող տառապյալ ժողովրդի հերոսական պայքարի մասին: Հեղինակը զարգացրել է այն տեսակետը, որ այդ պայքարն ունեցել է գերազանցապես ինքնապաշտպանական բնույթ և գոյատևման նպատակ, սակայն քիչ չեն եղել նաև ապստամբական գործողությունները:

Նոր ու սպառիչ խոսք է Ռ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունը Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին: Եթե բացառենք սոցիալ-դասակարգային դիրքերից պատմությունը մեկնելու պարտադրված ելակետը, ապա կարող ենք նշել, որ հեղինակին հաջողվել է անաչառ գնահատել պատմական ժամանակաշրջանն ու իրողությունները:

XIX դարի 70-80-ական թթ. նվիրված երկհատոր ուսումնասիրությամբ Զ. Կիրակոսյանը փորձել է բացահայտել հայ ազգային-ազատագրական պայքարի և մեծ տերությունների դիվանագիտական առնչությունները: Աշխատությունը

⁴¹ Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխությունը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պեյրուֆ, 1973:

⁴² Տե՛ս Իզմիրլյան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին, անձնական յուշերուս ընդմեջէն, հատ. 1, 2, Պեյրուֆ, 1962, 1966:

⁴³ Տե՛ս Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ., Պարիզ, 1935, տե՛ս նաև՝ Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925:

⁴⁴ Տե՛ս Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Ե., 1955: Ավելի ուշ այն վերահրատարակվեց, տե՛ս Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Ե., 2002:

⁴⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Երևան, 1965:

⁴⁶ Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից: Ուսումնասիրություն և փաստաթղթեր, Ե., 1958:

⁴⁷ Տե՛ս Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978, նույնի՝ Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Ե., 1980:

մեծապես նպաստել է միջազգային դիվանագիտական լաբիրինթոսում հայտնված անփորձ արևմտահայության անելանելի վիճակը հասկանալու, օգնել ճիշտ ըմբռնելու Կարինի ռազմավարական նշանակությունը կողմերի համար և այն փաստը, որ արևմտահայությունը կորսվեց հենց այդ հակասությունների կիզակետում:

Վերակառուցման և անկախության առաջին տարիներին ազատագրական պայքարին նվիրված ուսումնասիրություններով պատմագիտության մեջ նոր խոսք ասացին ավագ սերնդի որոշ ներկայացուցիչներ: Մյուս կողմից կոմունիստական գաղափարախոսության կաղապարներից ձերբազատված և թարմ ասելիքով հանդես եկավ պատմաբանների երիտասարդ սերունդը:

Թեմային անմիջականորեն առնչվում են Հ. Զատիկյանի աշխատությունները⁴⁸, որոնք ներկայացնում են Կարինի նահանգի XIX դարի երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, նահանգի գավառների պատմությունը, ժողովրդագրությունը և այլն:

XIX դարի վերջին քառորդի ազատագրական պայքարի հիմնահարցերի խորագիտակ քննարկումներով և գիտական բարձր մակարդակով ու հիմնարար եզրակացություններով առանձնանում են ակադեմիկոս Հ. Սիմոնյանի ուսումնասիրությունները⁴⁹: Հիմնախնդիրն որոշակիորեն առնչվող արժեքավոր աշխատություններ են հեղինակել Ա. Համբարյանը⁵⁰, Հ. Ղազարյանը⁵¹, Է. Կոստանդյանը⁵², Ա. Խառատյանը⁵³, Ա. Մելքոնյանը⁵⁴, Վ.

⁴⁸ Տե՛ս Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Ե., 2013, տե՛ս նույնի՝ Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության, 1894-1896 թթ. կոտորածների, Մեծ եղեռնի զոհերի թվաքանակի հարցի շուրջ, «ՊԲՀ», թիվ 1(125, էջ 143-151), տե՛ս նույնի՝ Կարնո նահանգի պատմությունից, «ԼՀԳ», 1991, թիվ 1, տե՛ս նույնի Կարին քաղաքը որպես ռազմական խոշոր կենտրոն, «Հայրց բանակ», 2002, թիվ 1-2, տե՛ս նույնի Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), «ԲՀԱ», 1991, թիվ 3: Բնականաբար առանձին լույս տեսած հոդվածների դրույթների զգալի մասը տեղ են գտել նշված մենագրությունում, սակայն շատ տեսակետներ ու փաստական տվյալներ էլ դուրս են մնացել: Այդ պատճառով է, որ որոշ հոդվածներ առանձին ենք նշում:

⁴⁹ Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, Ա գիրք, Ե., 1966, տե՛ս նաև Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, գիրք II, Ե., 2003, գիրք III, Ե., 2009, գիրք IV, Ե., 2010, գիրք V, Ե., 2013:

⁵⁰ Տե՛ս Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, XIX դ. վերջ-XX դարի սկիզբ, Ե., 1990:

⁵¹ Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001:

⁵² Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Իսրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, տե՛ս նույնի՝ Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմությունից (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, տե՛ս նույնի՝ Դովագներ Մաղաքի արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Ե., 2015:

⁵³ Տե՛ս Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի սահմանադրության մասին, «ՊԲՀ», թիվ 2, 2008, էջ 84:

Պողոսյանը⁵⁵, Հ. Պողոսյանը⁵⁶, Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը⁵⁷, Ս. Սարգսյանը⁵⁸, Կ. Եղիազարյանը⁵⁹, Խ. Ստեփանյանը⁶⁰: Բարձրադեք աշխատություններով հայ ազգային-ազատագրական պայքարին, մասնավորապես ՀՅԴ-ի պատմությանը վերաբերող մեծ թվով տեսական ու գործնական հարցեր են լուսաբանել Հ. Գևորգյանը⁶¹, Գ. Խոտիկյանը⁶², Ա. Ներսիսյանը⁶³, Հ. Գրիգորյանը⁶⁴:

Արենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նշված են հետազոտության նպատակները և խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլուխը՝ «Կարինի նահանգը XIX դարի 80-ական թթ. ազատագրական շարժման կենտրոն», բաղկացած է երեք ենթագլուխներից:

⁵⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (պատմաքննական ուսումնասիրություն), Ե., 2003:

⁵⁵ Տե՛ս Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Ե., 2005:

⁵⁶ Տե՛ս Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը, Ե., 1969:

⁵⁷ Տե՛ս Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. առաջին, Ե., 2000:

⁵⁸ Տե՛ս Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ուսմավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, տե՛ս նույնի՝ «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014:

⁵⁹ Տե՛ս Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Եր., 2016, տե՛ս նույնի՝ Սարգիս Կուկունյանը և նրա գլխավորած արշավանքը, «ՊԲՀ», 2000, թիվ 1, 18:

⁶⁰ Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Ե., 2008, տե՛ս նույնի՝ Ռուբեն Տեր-Մինասյան. պայքարի առաջին փորձառությունը, «ԲՀԱ», 2004, թիվ 1, էջ 144-149:

⁶¹ Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012:

⁶² Տե՛ս Խոտիկյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Ե., 2000, տե՛ս նույնի Հ Յ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Ե., 2006: Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «ԲՀԱ», Ե., 2002, թիվ 1, էջ 63,64: Տե՛ս նաև Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, Ե., 2003, էջ 57-65:

⁶³ Տե՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Ե., 2006, տե՛ս նույնի՝ Ռուբեն, «Ապրող հերոսներ» մատենաշար, թիւ 4, Ե., 2007:

⁶⁴ Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1885-1898 թթ., Ե., 2002:

Առաջին ենթագլուխը՝ «Ազատագրական պայքարի զինված փուլի նախադրյալները», նվիրված է XIX դարի վերջին քառորդի՝ կարինահայության վերագարթոնքի և կազմակերպական, կրթալուսավորչական գործունեության լուսաբանմանը և զինված պայքարի նախադրյալներին:

Սոցիալ-տնտեսական և քաղաքականից բացի, ազատարար այդ պայքարի նախադրյալներից մեկը եղավ արևմտահայ Սահմանադրական շարժումը, որին Կարինում նպաստեց 1879 թ. գրված «Կարինի բարենորոգումների ծրագիրը»⁶⁵: Առաջաբանից, քառասունվեց հոդվածներից ու վերջաբանից բաղկացած այդ «Ծրագրում» նահանգի անմխիթար կացությունը ներկայացնելով՝ հեղինակները շեշտում են, որ այդ ամենին նպաստել են տեղական պաշտոնյաներն իրենց «ապիկար և անձի, քան երկրի» համար գործունեությամբ և առաջարկում են հայանպաստ վերափոխություններ կատարել: Այս ծրագիրը վկայում է կարինահայության ազգային ու քաղաքական ինքնագիտակցության աճի մասին: Մյուս նախադրյալը Ջեյթունի 1862 թ. ապստամբությունն էր, որը մեծապես խթանեց հայության ազատագրական ձգտումները, բարձրացրեց նրա ազգային ինքնագիտակցությունը, որի շնորհիվ ժողովուրդը փարեց զինված պայքարի գաղափարին:

Կարևոր նախադրյալ էր նաև Հայկական հարցի միջազգայնացումը, որը ոչ միայն շրջադարձային եղավ, այլև դարձավ այն նշանակետը, որի լուծմանն ուղղվեց հայ ազգային-ազատագրական շարժումը:

Երկրորդ ենթագլխում լուսաբանված է 1880-ական թթ. սեփական ուժին կոթնելու գաղափարով տոգորված կարինահայության կազմակերպական շրջափուլ թևակոխելու գործընթացը: Միմյանց զուգահեռ տիրապետող էին երկու մտայնություն՝ կրթել, լուսավորել և խավարից դուրս բերել ժողովրդին, ապա պայքարել նրա ազատության և մարդավայել ապրելու իրավունքի համար:

Կարինը, որ առավելագույնս ազդվում էր արևելահայ և արևմտահայ քաղաքական և հասարակական շարժումներից, դարձավ այդ խմորումների և գործունեության կարևորագույն կենտրոններից մեկը: «Արձնեան», «Ուսումնասիրաց», «Անձնուեր» ընկերություններին փոխարինելու եկան 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ստեղծված «Ղևոնդյանց», «Մամիկոնյանց» և այլ կրթամշակութային ընկերություններ: Այնուհետև Մ. Օրմանյանի խորհրդով քաղաքում գործող չորս մշակութային ընկերությունները՝ «Վարդանանց», «Դպրաց», «Ուսումնասիրաց» և «Ընթերցասիրաց», միավորվում են և կազմում «Բարձր հայոց միությունը»⁶⁶:

⁶⁵ Տե՛ս Ջատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), «ԲՀԱ», 1991, թիվ 3, էջ 185-201:

⁶⁶ Տե՛ս Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, էջ 5000: Օսմանյան իշխանությունները «Բարձր» բառի մեջ իրենց համար ինչ-որ ստորացուցիչ երևույթ տեսան, կասկածեցին նրա

Մինչև ազգային կուսակցությունների ստեղծումը արևմտահայ իրականության մեջ տարածական ընդգրկումով, անդամների թվաքանակով, ծրագրային հստակ ձևակերպումներով, կազմակերպական կուռ կառուցվածքով և գաղտնի գործելու կարողությամբ ամենաուժեղը «Պաշտպան հայրենյացն» էր: Ընկերության նպատակն էր համարձակ, խելացի, ուժեղ և վստահելի հայ երիտասարդներին համախմբել նույն տեսլականի շուրջ, գոյացնել նույն գաղափարի համար զոհողությունների պատրաստ կազմակերպություն, միջոցներ հայթայթել, զենք ձեռք բերել, զինավարժել երիտասարդությանը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանությունը:

Խորհրդային գաղափարախոսական կապանքներով կաշկանդված Ռ. Հովհաննիսյանը փորձում է ժխտել, որ այդ շարժումը ժողովրդական բնույթ ուներ: Սակայն իրականությունն այն է, որ դրան աջակցում էին բոլոր՝ նաև ունևոր խավի և հոգևորականության առաջադեմ բազմաթիվ ներկայացուցիչներ: Դրա «արմատական» թևը ազատագրության միակ ուղին համարում էր զինված ապստամբությունը և կողմ էր անհապաղ զինված ելույթին: Իսկ «չափավոր» թևը ժողովրդի վիճակի բարելավումը տեսնում էր մեծ տերությունների օգնությամբ աստիճանական բարեփոխումների մեջ և գտնում էր, որ զինված ելույթը հնարավոր կդառնա միայն երկարատև նախապատրաստությունից հետո: 1890 թ. շարժումը կրկին որոշ աշխուժություն ապրեց, որը դրսևորվեց Կարինում տեղի ունեցած տարածման զինված ելույթով: Այնուհետև աստիճանաբար պայքարի դրոշն անցավ ազգային կուսակցություններին:

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական ազգային կուսակցությունների տեղական մարմինների ստեղծումը Կարինում և դրանց գործունեության վաղ շրջանը», նշվում է, որ ազատագրական խմբակների և հատկապես «Պաշտպան հայրենյացի» գործունեության արդյունքում պարարտ հող էր ստեղծվել կուսակցությունների տեղական մարմինների ձևավորման համար:

Կարինում Արմենական կուսակցության գործունեություն մասին ուղղակի վկայությունները սակավ են⁶⁷, սակայն եղածները հիմք են տալիս ասելու, որ Կարինում կուսակցական մարմին թեև չի ստեղծվել, բայց անհատ արմենականներ գործել են:

1889 թ. Հնչակյան մասնաճյուղ ստեղծելու նպատակով Կարին են մեկնում Ռ. Մովսիսյանն ու Ա. Ռոստոմյանը, որոնք, Գր. Զիլինկիրյանի, Յ. Իշգալացյանի

քաղաքական բնույթի մասին և շուտով արգելեցին: Նրանց թելադրանքով այն ստացավ ավելի անմեղ՝ «Երկրագործական ընկերություն» անվանումը:

⁶⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 424, 1396 (Արտակ Դարբինյանի և Անուշավան Մկրտչյանի ֆոնդեր): Տե՛ս նաև՝ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Ե., 2003, Եկարեան Ա., Հուշեր, Պէյրուօ, 1985, Չարրզ Դ., նշվ. աշխ., էջ 404 և այլն:

և «Պաշտպան հայրենյացի» նախկին մյուս անդամների մեծ մասի հետ⁶⁸ միանալով, ստեղծում են տեղի հնչակյան մասնաճյուղը, որի գաղափարական ու գործնական ղեկավարը Գ. Չիլինկիրյանն էր⁶⁹: Կարճ ժամանակում հնչակյան կառույցն այնքան էր հզորացել, որ իր վրա վերցրեց 1890 թ. Կարինում տեղի ունեցած ցույցի ու դրան հաջորդած իրադարձությունների կազմակերպումը, որտեղ առաջին անգամ հայը զենքի դիմեց, և դա անկյունադարձային եղավ. կոփվեց հայի հոգեբանությունը: Նա մշտական զոհից շրջադարձ կատարեց դեպի պատժողի կարգավիճակ:

1890 թ. ՀՅԴ «Կենտրոնը» Կարինում ներկայացուցիչ նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից Հ. Աստուրյանին⁷⁰, որով պայմաններ ստեղծվեցին այդ կազմակերպության գործիչների՝ ՀՅԴ-ի շուրջ համախմբվելու համար:

Անդրկովկասից Կարին անցած ՀՅԴ առաջին գործիչը Տիգրան Օքոնյանն էր (Շամիլը)⁷¹, որին ՀՅԴ կենտրոնը համարում էր իր լիազոր ներկայացուցիչը: Վերջինս իր պատրաստակամությամբ և եռանդուն գործունեությամբ աչքի ընկնող Ա. Արամյանի օգնությամբ աշխատանքներ ձեռնարկեց՝ ՀՅԴ տեղական մարմին ձևավորելու համար: Տ. Օքոնյանի խմբի ձեռնարկած հախուռն, իսկ հաճախ նաև անխոհեմ քայլերը տարածայնություններ առաջացրին նրա և Խ. Կերեկցյանի միջև: Եվ չնայած ՀՅԴ կենտրոնի արգելանքին՝ Խ. Կերեկցյանը Ա. Արամյանի ձեռքով սպանվում է: Այդ քայլը ՀՅԴ կենտրոնի կողմից դատապարտվում է:

Տ. Օքոնյանը միշտ իր տեսակետներն ուներ և առաջիններից էր, որ Հ. Դավթյանի հետ գրած «Հրաւէր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին» նամակում, դժգոհություն հայտնելով կուսակցության կենտրոնից, առաջարկեց հստակեցնել հեղափոխության նպատակը, կազմակերպական խնդիրները և գործելակերպի միջոցներն ու մարտավարությունը:

Տ. Օքոնյանը կազմեց նաև ՀՅԴ պատմության մեջ առաջին մարտական կանոնագրի նախագիծը⁷²՝ «Հրահանգ հրոսակային խմբերին», որով նրա առաջարկած հարձակողական մարտավարությունը երբեմն անպաշտպան

⁶⁸ Տե՛ս «Արօր», Երզնկա, 1911, 25 հոկտեմբերի, թիվ 245: Ավելացնենք, որ «Պաշտպան հայրենյաց»-ի անդամների մեծ մասն սկզբում անդամագրվեցին Հնչակյան կուսակցությանը, իսկ հետագայում շատերը համալրեցին նորաստեղծ ՀՅԴ-ի շարքերը:

⁶⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 34:

⁷⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 132, Լևոն Սարգսյան, Հուլիս 1889-1892 թվականներից (ՀՀԴ ծագումը, առաջին քայլերը և Ա. ընդ. ժողովը):

⁷¹ Նա մուտք է գործել Կարին 1890 թ. դեկտեմբերի 15-ին՝ Արամ Արամյանի և Հաբեթ Նշլյանի հետ միասին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 29:

⁷² Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Խոսիկյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «ԲՀԱ», Ե., 2002, թիվ 1, էջ 63,64:

ժողովրդին դարձնում էր քաղաքային նոխագ: Ուսումնասիրողների⁷³ մի մասը գտնում է, որ Կարինի ՀՅԴ կառույցն այդ ժամանակ ունեցել է Կենտրոնական կոմիտեի կարգավիճակ: Մյուսները հակառակն են պնդում: Փաստերի համադրումը խոսում է երկրորդ տեսակետի օգտին:

Երկրորդ գլուխը՝ «Ազգային-ազատագրական պայքարը Կարինի նահանգում XIX դարի վերջին տասնամյակում», բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հունիսյան դեպքերը և 1894-1896թթ. հայկական կոտորածները Կարինի նահանգում», ներկայացված են 1890թ. հունիսին Կարինում տեղի ունեցած ցույցը և դրան հաջորդած ողբերգական իրադարձությունները: Օգտագործելով առիթը՝ Կարինում իշխանությունները կազմակերպեցին 1894-1896 թթ. կոտորածները:

Երկրորդ ենթագլխում՝ «Ֆիդայական շարժումը Կարինի նահանգում», լուսաբանվում են շարժման առաջացումը և ընթացքը: Շեշտվում է, որ այն պատմական տվյալ պահին թուրքերի կողմից ոչնչացման եզրին հասցված արևմտահայության գոյատևման հրամայականն էր: Նախադրյալներ հանդիսացան սոցիալ-տնտեսական, քաղաքական հանգամանքները և դրսից եկած որոշ ազդակներ (Սահմանադրական շարժում, Արևմուտքի ազատաբաղձ գաղափարների տարածում, բալկանյան ժողովուրդների օրինակ) և հետապնդում էր երկու խնդիր՝ դիմել վրիժառության և հնարավորինս հակազդել թուրք-քրդական բռնություններին, մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա:

Կարնո աշխարհին առաջիններից մեկն էր, որտեղ սկսվեց ֆիդայական շարժումը, որի սկզբնական փուլի կարևոր դերակատարներից էր Տ. Օքոնյանը⁷⁴: Նրա կողքին մշտապես գործեց Ա. Արամյանը⁷⁵, որը զինված պայքարը համարում էր հայ ազգի փրկության միակ ուղին: Նա կարողացավ կապ հաստատել Կարնո աշխարհի տարբեր շրջաններում գործող հայդուկային խմբերի միջև, համախմբել նրանց: Նա 1895թ. ողբերգական իրադարձությունների նախօրեին մեկնում է Կարին, որտեղ Ռ. Զոռյանի հետ կազմակերպում է տեղի հայության ինքնապաշտպանությունը: Ա.Արամյանը 1896թ. մատնությամբ ձերբակալվում է⁷⁶ և նույնիսկ մահապատժին սպասելիս

⁷³ Օրինակ՝ Գ. Խուդինյանը, տե՛ս Խուդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2003, էջ 57-65:

⁷⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003:

⁷⁵ Տե՛ս Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 528:

⁷⁶ Նա 1899 թ. Մահապատժի է ենթարկվում Կարինում:

չի վիատվում, բանտից նամակով դիմում է ընկերներին և միասնության ու վրեժի կոչ անում⁷⁷:

Կարևո աշխարհի նշանավոր հայդուկներից էր Քեռին (Քյաֆթառ, Արշակ Գավաֆյան), ով 1887 թ. իր խմբով գործում էր Կարինի շրջանում: 1890 թ. նա մասնակցում է Ս. Կուկունյանի արշավանքին, իսկ 1895 թ. ծանր օրերին Անդրանիկի հետ էր: Այնուհետև մասնակցում է Սասունի ինքնապաշտպանական մարտերին, ապա անցնելով Այսրովկաս՝ հայ-թաթարական կռիվներին: Քեռին վերածնվող հայ ժողովրդի ապագայի նկատմամբ լավատեսության մարմնացում էր: Ֆիդայական պայքարի նվիրյալների կոհորտայում չկա մեկ ուրիշը, որ ազատագրական պայքարին նվիրված տարիների գումարով (կյանքի 53 տարիներից 35-ը) հավասարվի Քեռուն: Հուշագիրները միաբերան ընդգծել են նրա համեստությունը, կատարած գործի կարևորության գիտակցումը, պատասխանատվությունը և բնավորության լավագույն գծերը⁷⁸:

Կարևո աշխարհի առաջին հայդուկներից էր Հունոն (Հարություն Տեր Մարտիրոսյանը)⁷⁹, որը, 1890 թ. կեսերից իր շուրջը համախմբելով մի քանի բախտակից քաջ ու «ղաշաղ» դարձածների, ստեղծում է իր խումբը և գործունեություն ծավալում: Հունոյի գործունեությունը հուշագրություններում գնահատվել է ոչ միանշանակ. «Յեղափոխական կարող էին,-գրում է Վ. Վալադյանը,-եւ դարձան, երբեմնի աազակներ Չաթօն, Շերոն, Սէրօրը, բայց ոչ Յարութին-աղաները: Լավ կլինի, որ մեր ազատագրական շարժման պատմության մէջ որոմները զատենք մաքուր ցորեններից»⁸⁰:

Հայդուկային պայքարի գործիչներից էին նաև կարնեցիներ Գարեգինը և Միքայելը, Գևորգը և Եղիշը՝ «Սև օձ» անունով, Հովհաննես Կորկոտյանը, Վահան Շահինյանը, Սեպուհը, Կայծակ Առաքելը և ուրիշներ:

Հ. Կորկոտյանը վաղ տարիքում անդամագրվում է ՀՅԴ-ի «Վրէժ» խմբին և դառնում լավ դիպուկահար: 1895 թ. հոկտեմբերի 18-ին Կորկոտը մորեղբոր տղայի՝ Մարտիրոսի հետ զինված փողոց է դուրս գալիս, կռվի բռնվում և տասը զոհ պատճառելով թշնամուն՝ զոհվում:

Կարինի նվիրյալ դեմքերից էր նաև Վահան Շահինյանը, որը սահմանադրության շրջանում նյութական և բարոյական մեծ

⁷⁷ Տե՛ս Չարրզ Ղ., նշվ. աշխ., էջ 538: Նամակը ստորագրված է «Թաթուկ» և թվագրված 30 Յուլիսի 1896 թ.:

⁷⁸ Օրինակ՝ Թ. Նազարբեկյանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 49, գ. 1, ց. 4, թ. 13), Անդրանիկը (տե՛ս Չորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի օրագրութիւնը (1914-1917), Բոստոն, 1924, էջ 63): Քեռու մասին ջերմ են արտահայտվել «Ռուսակիյե վեդոմոստի» (տե՛ս «Русские Ведомости», 18 մայիսի, 1916), «Արև» (տե՛ս «Արեւ» օրաթերթ, 14 հունիսի, 1916), «Հորիզոն» (տե՛ս «Հորիզոն», 28 դեկտեմբեր, 1915) և այլ գործիչներ ու թերթեր:

⁷⁹ Հունոն որոշ ժամանակ հարել է Հնչակյան կուսակցությանը, իսկ ավելի ուշ դարձել դաշնակցական:

⁸⁰ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1958, էջ 51:

զոհողություններով ու իր հետևողական պայքարով կարողացել էր դառնալ քաղաքի բարեկեցիկ հայ երիտասարդության առաջնորդը: Տեղի հերոսական դեմքերից էր նաև Ռուբեն Շիշմանյանը՝ «Երզնկացի կամ Դերսիմի քեռին», որը քաջությանը միշտ զուգակցում էր կազմակերպելու և ղեկավարելու հմուտ կարողությունները: Հետագայում նա ձերբակալվում է: 4 տարի տևած դատավարական քաջքշուկից հետո թուրքերը, «ապացուցելով» նրա մեղքը, դատապարտում են մահվան:

Կարնո աշխարհում աչքի ընկնող հայդուկներ էին Անտոն Գոշը, Նիկոլը, Մելքոնը, Տուրբախը (Հարություն Այվազյան կամ Կիրակոսյան), Գերասիմը, Կայծակ Առաքելը (Աբաջյան, բաբերդցի Աղա), Բաբերդցի Սեպուհը (հայտնի է նաև Քյոսա Արշակ անունով) և շատ ուրիշներ:

Բարձր Հայքում երկար տարիներ ժողովրդի պաշտպանության պատվաբեր գործը կատարել է Ա. Ազնավուրյանի հայդուկային խումբը: Կարնո աշխարհի ազատագրական գործիչներից էին նաև կարնեցիներ Գրիգոր Տեր-Մկրտչյանը, Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), Վարդգեսը (Հովհաննես Սերենկյույան)՝ Կարնո և ողջ հայության սիրելի Գիսակը, Գարեգին Կարնեցին (Գարեգին Ղոռյան), Միքայելը (Քյոսա), Բաբերդցի Գևորգը, Կարնեցի Եղիշը, Բալաջանը (Ստեփան Ստեփանյանց), Վանի Սարգիսը, Կայծակ Առաքելը (Բաբերդցի Վարազ) և ուրիշ շատ-շատերը:

XIX դարի վերջերին Կարինի նահանգում ևս ֆիդայական պայքարն սկսեց աստիճանաբար անկում ապրել, քանի որ նահանգը գտնվում էր երկու կայսրությունների ուժեղացված հսկողության ներքո, յուրաքանչյուր տեղաշարժ ու գործողություն անմիջապես նկատվում էր և խիստ պատժվում: Ավելացնենք նաև, որ Կարինի նահանգում հայդուկային պայքարն այնպիսի լայն ընդգրկումներ չունեցավ, ինչպես Սասունում, Մուշում կամ Տարոնում, քանի որ նահանգում թուրքական երրորդ բանակի ներկայությունը ազատ գործելու հնարավորություն չէր տալիս:

Եզրակացությունների մեջ ի մի են բերված ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները:

1. Հայոց մտավոր կենտրոններ Կ.Պոլիս-Թիֆլիս գաղափարական շփումների հանգուցակետում գտնվող Կարինի նահանգում առաջիններից մեկը սկսվեցին ազատագրական լուրջ խմորումներ:

2. «Կարինի բարենորոգումների ծրագիրը» հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների նոր փուլի սկիզբ էր նշանավորում: Այն իրավականորեն ձևակերպեց ժողովրդի բողոքելու իրավունքը, վստահություն ներշնչեց իր ուժերի նկատմամբ, հնարավորություն՝ կրոնադավանական կաղապարները ճեղքելու և ազգային ինքնորոշման իրավունքի համար պայքարելու: Հայության ինքնագիտակցության բարձրացման, թուրքական բռնություններին ուժով հակադրվելու մտայնության տարածման համար կարևոր նշանակություն ունեցավ և Չեյթոնի 1862 թ. ապստամբությունը:

3. Կարինահայությունը վերափոխումների առաջնագծում էր, իր արարքներով մարտահրավեր նետեց դարավոր հարմարվողականությանը և առաջիններից մեկը դուրս եկավ ազատագրական պայքարի: Մտավորականությունը կազմակերպություններ հիմնեց և ամբողջ ուժով զարկ տվեց կրթամշակութային, քարոզչական և կազմակերպչական աշխատանքներին:

4. Արևմտահայ իրականության մեջ ամենահզորը Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն էր, որն իր ծրագրերով, կուռ կառուցվածքով և գաղտնի գործելու հմտությամբ պարարտ հող նախապատրաստեց կուսակցությունների տեղական կառույցների ստեղծման համար:

5. Կարինում թեև Արմենական կուսակցության տեղական կառույց չի եղել, սակայն անհատ արմենականներ գործել են: Իսկ կուսակցություններից առաջինը հնչակյաններն էին, որ Կարինում ստեղծեցին իրենց տեղական կառույցը և համագործակցելով «Պաշտպան հայրենյացի» նախկին անդամների հետ՝ նահանգում առաջինը զենք բարձրացրին իշխանության ներկայացուցչի դեմ:

6. Համազգային զարթոնքի աստեղային շրջանում՝ 1890-ական թթ. «կենսունակության քննությանը չդիմացած» հնչակյանների պառակտման և արմենականների կտրուկ թուլացման արդյունքում ՀՅԴ-ի շուրջ կենտրոնացան ազատամարտի ուժերն ու հնարավորությունները: Այդ նույն գործընթացը տեղի ունեցավ նաև Կարինում, որի արդյունքում ազատամարտի առաջատար ուժը և դրանց կենտրոնացման առանցքը դարձավ ՀՅԴ-ի տեղական մարմինը:

7. Ազգային կուսակցությունների տեղական մարմինների ձևավորման շրջանում գերակայողն անմիջապես զինված ելույթներ ունենալու և դրանցով Հայկական հարցի վրա մեծ տեղությունների ուշադրությունը գրավելու մարտավարությունն էր, որը խոր հակատությունների առիթ դարձավ նրանց և խիստ զգուշավոր դարձած պաշտպանհայրենյացական ավագ սերնդի միջև, ինչը հանգեցրեց անցանկալի երևույթների:

8. 1890 թ. Կարինի ցույցն անհնազանդության և ազատության համար բողոքի պոռթկում էր: Հայի հոգեբանությունը փոխվեց. սկսվեց մշտական զոհի կարգավիճակից դուրս գալու, անարդարությունների համար պատժող և վրիժառու դառնալու գործընթացը:

9. 1894-1896 թթ. կոտորածները մինչև 1915 թ. ցեղասպանությունը կարինահայությանը հասցված ամենամեծ հարվածներն էին: Հայերից ոմանք կրոնափոխ եղան կամ լքեցին երկրամասը: Արդյունքում նահանգի ժողովրդական նկարագիրը նկատելիորեն փոխվեց:

10. 1890-ական թթ. կարինահայերը ևս դուրս եկան ֆիդայական պայքարի: Կարինը դարձավ կարևորագույն տարանցիկ ուղիներից մեկը դեպի երկիր զենք-զինամթերք և կովող ուժեր փոխադրելու համար: Սակայն նահանգում տեղակայված թուրքական երրորդ բանակի ներկայությունը հնարավորություն չտվեց այստեղ հզոր ֆիդայական գործունեություն ծավալելու:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում

1. Քաջարի հայդուկ քեդին (Արշակ Գավաթյան), Հայաստանը ցեղասպանությունից վերածնունդ, Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների յոթերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 355-370:
2. Ֆիդայական պայքարը Կարնո աշխարհում XIX դարի վերջին քառորդին, *Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, научно-аналитический журнал «Регион и мир»*, թիվ 1, 2016, էջ 32-40:
3. Ազատագրական խմորումները Կարինում XIX դ. վերջին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, թիվ 3 (2016):
4. Создание организационных структур армянских национальных партий в Карине и ранний период их деятельности, *Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, научно-аналитический журнал «Регион и мир»*, թիվ 1, 2017, էջ 51-63:
5. Ազատագրական պայքարի ակունքներում. Տիգրան Օրոնյան, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, թիվ 1 (15), 2017, էջ 61-68:

САРГСЯН АРМАН СУРЕНОВИЧ
КАРИН В АРМЯНСКОМ ОСВОБОДИТЕЛЬНОМ ДВИЖЕНИИ
ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XIX ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 14-го июля 2017 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

РЕЗЮМЕ

В последней четверти 19-го века граничащая с Россией вилает Карин, своим географическим расположением играл важную экономическую, политическую, стратегическую и культурную роль. После войны 1877-1878 годов, армяне Карина также встали на освободительную борьбу.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы и источников.

В первой главе “Провинция Карин - центр освободительного движения в 80-х годах 19-го века” представлены предпосылки этой борьбы - Конституционное движение, разработанные в 1872 г. документы «Конституционная директива для гаваров» и «Праграмма реформ для Карина», восстание в Зейтуне 1862, Армянский вопрос, июньские события 1890 года, формирование освободительных кружков, создание местных органов национальных партий, борьба фидаинов как начало свободительной борьбы и другие факторы.

Подчеркивается тот факт, что «Защитник Отечества» был самым мощным среди освободительных кружков и то, что его деятельность сыграла важную роль для создания местных органов национальных партий.

Очень мало непосредственных свидетельств о деятельности партии Арменакан в Карине, тем не менее, имеющиеся небогатые данные дают основание утверждать, что несмотря на то, что в Карине

не был основан партийный орган, отдельные арменаканы действовали в вилаете.

Представители партии Гнчак, сотрудничая с бывшими членами организации «Защитник Отечества», в 1889 г. в Карине основали местное отделение гнчакской партии, идеологическим и практическим лидером которого стал Г. Чилинкирян.

Сразу же после основания партии Дашнакцутюн, проводилась работа для формирования местного партийного органа в Карине. Первым деятелем Дашнакцутюн, переправившимся с Закавказья в Карин, был Т. Оконян (Шамиль), которого поддерживали А. Арамян, О. Давтян и другие.

Вторая глава - “Национально-освободительная борьба в Карине в последнем десятилетии 19-го века ”- состоит из двух частей.

Здесь освещаются июньские события 1890 года. В 1894-1896 гг. последовали массовые убийства армян, организованные турецким правительством. До Геноцида 1915 года, она является сильнейшим ударом, нанесенным армянам Карина.

Подтверждается, что формирование и постепенное развитие фидаинского движения одним из первых началось в провинции Карин; освещается, что движение было продиктовано необходимостью спасти западных армян, оказавшихся под угрозой истребления со стороны турецких властей. Представлены видные деятели движения, которые отдали свою жизнь за свободу своего народа.

В конце диссертации представляются заключения, в которых подытоживаются результаты проделанной работы.

SARGSYAN ARMAN S.
KARIN IN THE ARMENIAN LIBERATION MOVEMENT OF THE
LAST QUARTER OF THE XIX CENTURY

Dissertation for the degree of the of Doctor of History on the
specialization of
“History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on July 14, 2017, at 14⁰⁰
at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC
RA
by the Institute of History of the National Academy of Sciences of RA
(0019, RA, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

In the last quarter of the 19th century, the province of Karin, bordering with Russia, played an important economic, political, strategic and cultural role with its geographical location. Unable to withstand oppressions, which became unbearable after the war of 1877-1878, the Armenians of Karin embarked on the liberation struggle.

The thesis consists of an introduction, two chapters, a conclusion, and a list of literature and sources.

The first chapter "Karin Province - the center of the liberation movement in the eighties of the 19th century" presents the prerequisites for this struggle - the Constitutional Movement, the documents developed in 1872 "The Constitutional Directive for the Gavars" and "The Reforms for Karin," the uprising in Zeytoun 1862, the Armenian question, the June events of 1890, the formation of liberation groups, the creation of local bodies of national parties, the struggle of fidain as the first steps of the liberation struggle and other factors.

It is emphasized that the "Defender of the Fatherland" was the most powerful among the liberation groups and the fact that its activities played an important role in the creation of local bodies of the national parties.

There are very few direct testimonies about the activity of the Armenakan party in Karin, however, the rare data claim that, despite the

fact that the party body was not established in Karin, some Armenakans operated in vilayet.

Representatives of the Hnchak Party, working with former members of the organization “Defender of the Fatherland”, founded the local branch of the Hnchak party in Karin in 1889, whose ideological and practical leader was G. Chilinkiryan.

Immediately after the founding of the Dashnaktsutyun Party, work was carried out to form a local party body in Karin. The first member of Dashnaktsutyun party who arrived in Karin from Transcaucasia was T. Okonyan (Shamil), supported by A. Aramyan, G. Davtyan and others.

The second chapter - "National liberation struggle in Karin in the last decade of the 19th century" - consists of two parts. They highlight the June events of 1890, which were followed by the massacres of Armenians in 1894-1896, organized by the Turkish government. Despite the fact that this massacre remains in the shadow of the Genocide of 1915, it is the most powerful blow inflicted on the Armenians of Karin before the Armenian Genocide.

It is confirmed that the formation and gradual development of the fidain movement was one of the first to begin in the province of Karin. It is highlighted that the movement was dictated by the need to save the Western Armenians, who were under the threat of the extermination by the Turkish authorities. The prominent figures of the movement who gave their lives for the freedom of their people are represented.

At the end of the thesis conclusions are presented, in which the results of the investigation are summarized.